

պէս տեսնում ենք, կատարելապէս սխալ է գրւում իմաստասիրական երկերի թարգմանութեան վերաբերեալ խնդիրը, երբ բանասիրական այս կամ այն աշխատութեան մէջ խօսք է լինում շարունակ արիստոտէլեան երկերի ու մեկնութիւնների հայ թարգմանչի մասին:

Երևան:

ՊՐՈՓ. Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆ

(Շարունակելի:)



ԻՍԼԱՄԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Շարունակելի:)

Ժ.Գ.

Երեքտասաներորդ մոլորութիւնն այլազգեաց:

Կրճատումն¹, որ է 'Սուննաթ'², եւ անարգեն զմեզ թէ 'անթլիատ'³ էք:

Նախ ասեն թէ ուխտն Աբրահամու 'թլիատութիւն'⁴ էր, եւ մեր որդիք եմք նմա 'թլիատութեամբ'⁵:

'Նախ'⁶ պատասխանեմք եթէ մեր զհաւատն ունիմք զԱբրահամու. եւ 'հաւատով' եմք որդիք նմա⁷. Որ լաւագոյն է քան զթլիատութիւն. զի հաւատաց Աբրահամ յԱստուած եւ արդարացաւ, ասէ գիրն, այլ ոչ 'թէ թլիատութիւն'⁸:

Դարձեալ. Աստուած ուխտեաց Աբրահամու 'զթլիատութեան'⁹ օրէնք իբրեւ անկատարից. եւ նոյն Աստուած փոխեաց զայն եւ ետ մեզ 'մկրտութեան սրբութիւն'¹⁰, կատարելոցս օրէնք:

Դարձեալ. Աբրահամու ետ զմարմնաւոր 'թլիատութիւն'¹¹. Իսկ մեզ՝ զհոգեւորն: Զի դուք զաւելորդ մորթն կտրէք, որ 'անօգուտ' է¹² առանց հաւատոց եւ բարի գործոց: Այլ մեր զաւելորդ մեղքն հատանեմք հաւատովք եւ բարի

գործովք: Ապա ուրեմն 'զհոգեւոր թլիատութիւն'¹ մեք ունիմք եւ ոչ դուք:

Դարձեալ. ասեմք 'թլիատութիւն'² ոչ է արդարութիւն. այլ՝ նշան յատկութեան. զի որդիքն Աբրահամու որոշեցին յայլազգեաց. որպէս որ զոչխար իւր դրոշմէ, զի յատկացի յայլոցն: Եւ յայտնի վկայ. յորժամ զքառասուն ամն 'յանապատն'³ էին, ոչ 'թլիատէին'⁴. այլ յորժամ յերկիրն պարգեւաց մօրն, յայնժամ 'թլիատեցան', զի 'որոշեցին'⁵ յայլազգեացն*:

Դարձեալ. նշան էր 'թլիատութիւն'² յայնժամ ազգէ եւ մասնէ ծնանիլ քրիստոսի: Ուստի⁶ Աբրահամ յերանսն երգմնեցուցանէր, ծածկապէս նշանակելով զքրիստոս: Արդ՝ մեք ոչ ծնանիմք՝ զքրիստոս մարմնաւորապէս⁷. այլ հոգեւորապէս. վասն որոյ ոչ 'թլիատիմք' մարմնաւորապէս, այլ 'հոգեւորապէս'⁸:

Դարձեալ. 'նշանակ էր 'թլիատութիւն'⁹ ազգին Հրէից. զի բաժանելոց էին յուխտէ եւ 'յօրինացն'¹⁰ Աստուծոյ, եւ կտրել ի բոլոր անգամոց քրիստոսի, եւ լինել խոտան ամենայն ազգի, որպէս այժմ են. զի յԱստուծոյ 'աչաց'¹¹ ելին. եւ ամենայն մարդկան ատելիք եղեն:

Դարձեալ. մեք ոչ 'թլիատիմք'. վասն այն զի բաժանեցուք ի 'հեթանոսաց'¹²: Այլ դուք զի 'թլիատիք' եւ ոչ 'մկրտիք', յայտ է զի հրէիցն էք հաւասար, որ նալաթ են ամենայն ազգի: Եւ ոչ ունիք զնոր օրէնս, զի ոչ 'մկրտիք', 'հաւասար էք կուպաշտիցն'¹³:

1 Ա. 'զհոգեւորն թլիատութիւնն':

2 Ա. 'թլիատութիւնն':

3 Ա. 'յանապատն':

4 Ա. 'թլիատեցան':

5 Ա. 'որոշին':

* Ա. ունի. "Դարձեալ. ութօրեայ 'թլիատութիւնն' նշանակէր զութերորդ դարն, որ դասք մեղաւորացն հատանին եւ ի հուրն ընկնուն. եւ արդարքն ամբողջ մնան. եւ յայտ է յայնմանէ, զի զնշանն ի ձեռս, կամ յականջս կամ յընկուռս, կամ յայլ ինչ մասն ոչ հրամայեաց դնել, այլ ի մասն այն, որ ունի զաւելորդ մորթն. ապա ուրեմն 'թլիատութիւնն' նշան է եւ ոչ արդարութիւն:

Դարձեալ. նշան է բազմութեան զաւակաց, զի մի ցրեացի սաղմն եւ վիժեացի. ուստի յայտ է զի օրէնք բազում կանայս եւ հարձս հրամայեաց առնուլ, եւ ամուսն խոտան էր ի նոցա մէջն: Իսկ մեզ կուսութիւն եւ պարկեշտութիւն պատուիրեաց հոգեւոր զաւակ եւ ոչ մարմնաւոր:

6 Ա. ունի. 'եւ':

7 Ա. 'մարմնապէս զքրիստոս':

8 Ա. 'հոգեպէս':

9 Ա. 'թլիատութիւնն նշանակէր':

10 Ա. 'յօրինաց':

11 Ա. 'յաչաց':

12 Ա. 'վասն զի բաժանեցուք ի հրէիցն', եւ 'մկրտիմք', զի բաժանեցուք ի հեթանոսացն:

13 Ա. ունի. 'Դարձեալ. ի մնալն ձեր, ի բարի սով-

1 Ա. 'Մոլորութիւն է կրճատումն Տաճկաց':

2 Ա. 'Սուննաթ':

3 Ա. 'անթլիատ':

4 Ա. 'թլիատութիւնն':

5 Ա. 'թլիատութեամբ':

6 Պալատէ յԱ. ն:

7 Ա. 'հաւատով նմա որդիք':

8 Ա. 'եթէ թլիատութեամբ':

9 Ա. 'զթլիատութեան':

10 Ա. 'զմկրտութիւնն' սրբութիւն:

11 Ա. 'թլիատութիւնն':

12 Ա. է 'անօգուտ':

‘Եւ թէ¹ ասեն քրիստոս թլփատեցաւ, դուք քրիստոնեայքդ ‘վասն էր² ոչ թլփատիր։ Ասեմք նախ եթէ քրիստոս թլփատուածեամբն զՀին օրէնս կատարեաց. իսկ մեզ նոր ‘օրէնս³ եդ զմկրտութիւնն՝ ասելով. մկրտեցարո՞ւք յանուն Հօր ‘եւ Որդւոյ եւ Հոգոյն սրբոյ⁴։

Դարձեալ. ‘թլփատեցաւ քրիստոս⁵, զի մի հակառակ երեւեցի ‘Հին օրինացն⁶. այլ՝ հնազանդ ու կատարող. որպէս ‘քառասնօրեայ⁷ ի տաճարն եկն եւ կատարեաց զօրէնսն⁸։

Դարձեալ. զի մի առաջօր երեւեցի Բանին ‘մարդեղութիւն⁹. որպէս Աբրահամու երեւեցաւ. այլ կատարեաց ‘զթլփատութիւն⁹, զի ստուգապէս մարդ եղեւ։

Դարձեալ. փնչ ի վերնատունն եւ ի խաչն զոր ինչ արար ‘քրիստոս¹⁰, ոչ աւանդեաց մեզ, այն յետ ընթերցան սկիզբն եդ նոր ‘օրինաց¹¹ եւ աւանդեաց մեզ՝ ասելով. զայս արարէք առ իմոյ յիշատակի։

[* Դարձեալ. թլփատեցաւ քրիստոս մարմնով, զի զեղեալ ուխտն իւր ճշմարտեցէ եւ կատարեցէ։ Իսկ մեզ հրամայեաց հոգեւոր թլփատութիւն, այսինքն զմեզն ճատանել ի հոգոյ եւ ի մարմնոյ¹²։

Եւ թէ ‘ասեն¹². ահա հարաւային ազգն ‘Հապէշի¹³ թլփատին ըստ օրինացն եւ են քրիստոնեայք. նոյնպէս եւ ձեզ պարտ է¹⁴ առնել։ Ասեմք. թէ նորա ոչ վասն օրինացն թլփատին. այլ՝ վասն զի աշխարհն այն վատաբեր է, եւ հոտեալ անդամն այն վնասէ եւ մահանայ մարդն¹⁵։

Եւ թէ¹⁶ ասեն. որպէս ‘մկրտութիւն¹⁷ սրբէ

րաթն, այսպէս է գրեալ, թէ միայն սուրաթով մարդն արգարանաւ ոչ կարէ. ապա ուրեմն սուրաթն ոչ է արդարութիւն։

1 Ա. ‘Երկրորդ։

2 Ա. ‘Ենդէր։

3 Ա. օրէնք։

4 Ա. ‘Եւ’ (= եւ այլն)։

* Ստորեւ ասողանիշ հատուածը հոս է Ա. ի մէջ։

5 Պակասէ յԱ. ն։

6 Ա. ‘Հինն աւրինաց։

7 Ա. ‘Ի տաճարն զգնայն եւ զգատին, եւ պահքն եւ այլն ամենայն։

8 Ա. ‘մարդեղութիւնն։

9 Ա. ‘զթլփատութիւնն։

10 Պակասէ յԱ. ն։

11 Ա. ‘օրինացն։

12 Ա. ‘ոք ասէ։

13 Ա. ‘Հապաշիքն։

14 Ա. ‘էր։

15 Ա. ունի. ‘Եւ դարձեալ. վասն բազմութեան ծննդոց որպէս ասացաք։

16 Ա. ‘Երկրորդ։

17 Ա. ‘մկրտութիւնն։

սկզբնական մեղքն, նոյնպէս եւ թլփատութիւնն։ Ասեմք նախ թէ թլփատութիւնն ի հին օրէնս¹ էր ընդդէմ սկզբնական ‘մեղաց², որպէս ‘օրինակն³ եւ նմանութիւն։ Իսկ ‘մկրտութիւն⁴ ի նորս է՝ ընդդէմ սկզբնական մեղաց, որպէս իր եւ ճշմարտութիւն։

Դարձեալ. որպէս ի գիշերի ‘ճրագն⁵ լուսաւորէ, այլ ի ծագել ‘լուսոյն⁶ խաւարի, նոյնպէս ‘թլփատութիւն⁷ ի հինն կարէր. այլ յորժամ ‘ծագեաց ‘մկրտութեան շնորհք⁸, տկարացաւ ‘թլփատութեան⁹ օրէնք։

Դարձեալ. մկրտութիւնն ի հինն անօգուտ էր. զի ‘գեռ¹⁰ ոչ էր մկրտեալ քրիստոս։ Իսկ թլփատութիւնն ի նորս անօգուտ է, զի բարձաւ քրիստոսիւ. այլ իւրաքանչիւր յիւրում՝ ժամու կարողանայ։ Ուստի յայտ է թէպէտ մկրտէին ի հինն, որպէս Մովսէսին եւ Յովհաննուն. ոչ կատարէր զնորհուրդ մկրտութեանս։ Այսպէս թէ որ թլփատէ ի նորս, ոչ ունի զնորհուրդ թլփատութեան եւ ոչ սրբի ‘սկզբնական մեղաց¹¹։

Դարձեալ. ‘թլփատութիւն¹² սրբէ միայն ի սկզբնական մեղաց, որպէս ասեն ոմանք։ Այլ ‘մկրտութիւն¹³ սրբէ¹⁴ սկզբնականէն եւ ի ներգործականէն. որպէս յայտ է ի նոր ‘հաւատացելոցն¹⁵, որք մկրտին եւ սրբին յամենայն մեղաց։ Ապա ուրեմն ոչ է հաւասար մկրտութիւնն եւ թլփատութիւնն։

Դարձեալ. թլփատութիւնն եւ ոչ¹⁶ սկզբնականէն սրբէ, որպէս յայտ է ի մարգարէսն. թէպէտ թլփատեցան, իջին ի դժոխս վասն սկզբնական մեղացն։ Իսկ մկրտութիւնն սրբէ. որպէս յայտ է. որք մկրտին ոչ ‘մտան¹⁷ ի դժոխս։

Դարձեալ. ‘մկրտութիւն¹⁸ զդուռն երկնից բանայ, զոր ոչ կարէ թլփատութիւնն, ըստ ‘որում¹⁸ Որ ոչ ծնցի ջրով եւ հոգով, ոչ մտանէ յարքայութիւնն, թէպէտ թլփատեալք էին։

1 Ա. ‘օրէնսն։

2 Ա. ‘մեղացն։

3 Ա. ‘աւրինակ։

4 Ա. ‘մկրտութիւնն։

5 Ա. ‘ճրագ։

6 Ա. ‘արեւուն։

7 Ա. ‘թլփատութիւնն։

8 Ա. ‘շնորհք մկրտութեանն։

9 Ա. ‘թլփատութեանն։

10 Ա. ‘գեռ եւս։

11 Ա. ‘ի սկզբնական մեղացն։

12 Ա. ‘թլփատութիւնն։

13 Ա. ‘մկրտութիւնն։

14 Ա. ունի. ‘ի։

15 Ա. ‘հաւատացելոց։

16 Ա. ունի. ‘ի։

17 Ա. ‘մտանէն։

18 Ա. ‘այնմ։

Գարձեալ. մկրտութիւնն շնորհօք որդիս առնէ Աստուծոյ եւ ժառանգակից Բրիստոսի, զոր ոչ ունին թլփատեալքն¹:

Գարձեալ. մկրտութիւնն ազատէ ի յաւիտենից պատժոցն², զոր ոչ առնէ թլփատութիւնն:

Գարձեալ. մկրտութեամբն արու եւ էգն³ սրբին, այլ թլփատութեամբն միայն արուն եւ ոչ էգն:

Գարձեալ. թլփատութիւնն էր կնիք մարմն նաւոր, ժամանակեա եւ անցաւոր. եւ յայտ է զի փոփոխեցաւ. իսկ մկրտութիւնն կնիք հոգեւոր եւ մշտնջենաւոր. զի անփոփոխ է կնիք մկրտութեան ի հոգին⁵:

Այս համեմատութիւնս ըստ հին թլփատութեանն էր. այլ ձերդ⁶ կրճատութիւնն ոչ է թլփատութիւն⁷, զոր ետ Աստուած Աբրահամն: Եւ յայտ է յերկուց: Նախ, զի ուխտն Աբրահամն ութօրեա թլփատէին. իսկ ձերդ ոչ այնպէս, այլ զծեր եւ զտղայ թլփատէր⁸: Երկրորդ Աբրահամն ուխտեաց զարու մանկունսն թլփատել, այլ Մահման ձեր՝ զարու եւ զէգն. որ է հակառակութիւն ընդդէմ օրինացն Աստուծոյ: Զոր ցուցանեմ ընդդէմ ձեր թէ դուք Տաճիկքդ⁹ ոչ ունիք թլփատութիւն: Եթէ¹⁰ զարու եւ զէգն թլփատէք, այս ընդդէմ է ուխտին Աբրահամն եւ խայտառակութիւն օրինացն Աստուծոյ: Իսկ թէ զարուն միայն, ահա զի եւ կանայք ձեր անթլփատք են: Եւ դուք ընդ նոսա խառնակելով, լինիք եւ դուք ընդ նոսա անթլփատք¹¹. զի որ միանայ ի կին պոռնիկ, մի մարմին է եւ պոռնիկ ընդ նմա: Եւ աստի յայտ է զի ոչինչ կերպիւ ունիք զթլփատութիւն¹² որպէս հրէայք, եւ ոչ զնորս մկրտութիւն որպէս Բրիստոնեայք: Ուրեմն¹³ երեւիք ի դասս կռապաշտից եւ հեթանոսաց¹⁴, որք ոչ ունին թլփատութիւն եւ ոչ մկրտութիւն. որպէս եւ դուք ոչ ունիք:

Նյութան առ այս¹¹:

- 1 Ա. զոր ոչ թլփատեալք:
- 2 Ա. յաւիտենից պատժոցն:
- 3 Ա. էգն:
- 4 Ա. այլ:
- 5 Ա. մկրտութեանն ի հոգին:
- 6 Ա. ձեր տաճկացդ:
- 7 Ա. թլփատութիւնն:
- 8 Ա. սուննաթէք:
- 9 Ա. Տաճիկք:
- 10 Ա. Զի թէ:
- 11 Պակասէ յԱն:
- 12 Ա. զթլփատութիւնն:
- 13 Ա. ունի. ի հարկէ:
- 14 Ա. ունի. եւ կռապաշտից:

ԺԳ.

Զորքնասաներորդ Մոլորութիւն է Այլազգեաց¹:

Զի պահք ոչ ունին. ոչ զհինն հրէից եւ ոչ զնորս՝ Բրիստոնէից:

Զոր տեսցուք, նախ զզանազանութիւն² կերակրոց, թէ որ ի նոցանէ պահոց է եւ որ զատկի³: Ասեմք թէ⁴ ամենայն մարմին յերկուս բաժանի. ի շնչաւոր եւ յանշունչ⁵. այսինքն՝ կենդանի եւ անկենդան: Արդ՝ որ ինչ կենդանի է, որպէս ոչխար, եւ կամ ի կենդանոյ յառաջ եկեալ, որպէս կաթն՝ եւ ձու, այն ուտաց եւ զատկի է կերակուր: Եւ որ անկենդան է եւ անշունչ, որպէս բոյսք եւ պտուղք, պահոց է կերակուր⁶: Եւ դուք զնորութիւնս զայս ոչ ունիք. ապա ուրեմն պահք ոչ ունիք:

Նախ. զի Մովսէս զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր պահեաց եւ ինչ ոչ⁷ եկեր: Նոյնպէս եւ Բրիստոս զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր պահեաց անսուղ⁸: Իսկ ի նորս Բրիստոնեայք յիսուն օր պահեն եւ պահոց կերակրով շատանան: Այլ պահք ձեր ոչ նոյնպէս. զի երեսուն օր է պակաս թուով քան զհին եւ զնորս: Նայ՝ եւ կերակուրն⁹ միս զատկի եւ բարեկենդանի: Ապա ուրեմն յայտ է թէ¹⁰ ոչ ունիք պահք:

Եւ եթէ¹¹ ասեն, մինչ յերեկոյս¹² անսուղ պահեմք. ասեմք թէ¹³ պահոց ընտրութիւն¹⁴ երկու է. այսինքն՝ մին¹⁵ ժամանակն եւ մին¹⁵ կերակուրն: Որպէս մեք, ազգ¹⁶ Բրիստոնէից, մինչ ընդ երեկոս¹⁷ անսուղ պահեմք, եւ յերեկոյն պահոց կերակրով շատանամք: Արդ՝ դուք ըստ ժամանակին պահէք եւ ըստ կերակրոյն լուծանէք. ապա ուրեմն ոչ ունիք պահք:

- 1 Ա. Մոլորութիւն Տաճկաց:
- 2 Ա. զանազանութիւն:
- 3 Ա. ունի. եւ ապա զմոլորութիւնն նոցա:
- 4 Պակասէ յԱն:
- 5 Ա. ի շնչաւորն եւ յանշունչն:
- 6 Ա. ունի. Որպէս Մովսէս տրէնս եգ՝ բազարջ հաց ընդ եղեգի ուտել ի պահքն, եւ դառն զնուլ ի զատկին. եւ այս աւերէք մեզ ի նորս աւանդեցաւ:
- 7 Ա. ոչինչ:
- 8 Ա. ունի. իսկ Եզրի պահեաց քառասուն տւր, այլ բազարջ ի հաճարէ եկեր միանգամ, եւ ջուր միայն:
- 9 Ա. կերակուր:
- 10 Ա. թէ:
- 11 Ա. թէ:
- 12 Ա. յերեկոս:
- 13 Ա. եթէ:
- 14 Ա. ընտրութիւնն:
- 15 Ա. մին:
- 16 Ա. ազգս:
- 17 Ա. յերեկոս:

[1] Գարձեալ. ի բոլոր տարին ի տիւն ուտէք եւ գիշերն ոչ. իսկ 'Ռամատան'¹ ամիսն ի գիշերն ուտէք եւ 'ցորեկն'² ոչ. եւ յայտ է որպէս յայլ ամիսն ոչ պահէք. նոյնպէս եւ ամիսն այն ոչ է պահէք³:

[2] Գարձեալ. ոչ է երեսուն օր 'պահէք'⁴ ձեր, այլ մի օր, զի որ այսօր պահէք, 'յերեսուն'⁵ լուծանէք եւ բարեկենդան առնէք, եւ Գարձեալ ի միւս օրն պահէք:

[3] Գարձեալ ընդ տիւ եւ ընդ գիշեր լինի օր մի, որպէս 'Մովսէս ասէ'⁶. եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն օր մի. արդ՝ դուք զտիւն պահէք եւ գգիշերն լուծանէք. յայտ է զի կէս օր է պահէք ձեր եւ ոչ բոլոր:

[4] Գարձեալ, առ Աստուած յերկինս տիւ եւ գիշեր ոչ է. այլ միշտ տիւ: Իսկ առ մեզ ընթացք արեգականս 'կէտէ ի կէտ'⁷ առնէ օր մի: Եւ արեգակն ոչ ժամանեալ 'ի կէտն'⁸ իւր միւս պէս է լուծանելն, թէ ի հասարակ աւուր թէ ընդ երեկս:

Գարձեալ. ի ցերեկս պահէք եւ ի գիշերի լուծանէք, կարծէք 'թէ'⁹ ի տիւն տեսանէ Աստուած եւ ի գիշերն ոչ. ապա թէ ոչ ընդէր զգիշերն ոչ պահէք¹⁰:

'Այսքան առ այս'¹¹:

(Շարտաւանդիւն:)

ԲԱԲԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ



1 Ա. 'ի Ռամատին:

2 Ա. 'ցերեկն:

3 Ա. ունի, 'նոյնպէս եւ ամիսն այն ոչ է պահէք:

4 Ա. 'պահէքն:

5 Ա. 'յերեկոյն:

[ա], [բ], [գ], [դ] հատուածներու կարգը այսպէս է

Ա. ի մէջ:

6 Ա. 'ասէ Մովսէս:

7 Ա. 'կէտ ի կէտ:

8 Ա. 'ի կէտ:

9 Ա. 'եթէ:

10 Ա. ունի. Գարձեալ. պահէք եղաւ վասն խստութեան մարմնոյ, զի զըսպեցի ի վափկութեան, եւ ի գիշերութեան. այլ ի պահէքն ձեր առաւել վափկանայք եւ գիրանայք զանազան կերակրովք եւ յաճախ ուտելովք:

Գարձեալ. պահէքն ազախարութիւն է գործեցեալ մեղաց. այլ ի պահէքն (ձեր) գործէք զամենայն ֆաւստութիւն եւ զանիրաւութիւն եւ զամենայն պղծաւիգ գործս:

Գարձեալ. պահէքն է պահպանութիւն խորհրդոց, բանից եւ զգայարանաց: Արդ՝ ի պահէքն ձեր նոյնպէս ունիք զշար խորհրդոցն ի միտն ձեր ու զշար խաւսս ի լեզուս եւ զիւրաքանչիւր օգայարանս անխափան ի գործս իւր. զձեռս ի զրկանաց եւ ի կաշառոց, զոտս ի չոր գնացոց, զաչս ի հոյեցուածոց եւ զականջս ի լուր: Այլ ուրեմն ունիք սրբութեամբ պահէք:

11 Պակասէ յԱ. ն:

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳՐԱՅ Ս. ՆՅԱՆԻ ՎԵՆՈՒՅ Ի ՍԵՐԱՍՏԻԱ

(Շարտաւանդիւն:)

141.

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

?

ՄԵԾՈՒԹԻՒՆՆ՝ 18×14×5 մմտ.: — ԳՐՈՒԹԻՒՆՆ՝ միասին: — ՏՈՂԷ՝ 13: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեփայտ: — ՀԱՆԳԱՄԱՆԷ՝ լաւ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿԷ՝ չկան: — ՎԵՐՆԱԳԻՐԷ՝ կարմիր: — ԳԻՐ՝ բոլոր: — ԳՐԻՉ ԵՆ՝ անծանօթ: — ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Սննդեղանի միջակերութեան Սեքսատիոյ, որուն կնիքը կայ սկիզբի էջին տակը. հայերէն, թուրքերէն, կենդանի արծիւ մը: Երկու կողմէն թափած են պրակներ:

Մատենան է՝ Գ. Ա. Յ. Բ.:

142.

Գ Ա Ն Ձ Ա Ր Ա Ն

?

ՄԵԾՈՒԹԻՒՆՆ՝ 23×16×12 մմտ.: — ԳՐՈՒԹԻՒՆՆ՝ միասին: — ՏՈՂԷ՝ 22: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՇՊԱՆԱԿԷ՝ չկան: — ՀԱՆԳԱՄԱՆԷ՝ բաւական լաւ: — ՎԵՐՆԱԳԻՐԷ՝ կարմիր: — ԳԻՐ՝ բոլոր: — ԳՐԻՉ՝ անծանօթ: — ԹՈՒԱԿԱՆ՝ (= 947+551) = 1498: — ՏԵՂԻ՝ Երուսաղէմ՝ Ս. Փրկիչ:

Մատենան է՝ Գ. Ա. Յ. Բ., կը պարունակէ 130 գլուխ, 130 աւուր վրայ, գանձեր, տաղեր եւ երբեմն մեղեդիներ, մեծ մասամբ նման նախապէս ցուցակագրուած գանձարաններու բովանդակութեան, ունի նորութիւններ:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԷ. «... Գրեցաւ աստուածային սուրբ տառս որ կոչի Գանձարան, ի սուրբ քաղաքս Երուսաղէմ, ի սուրբ ուխտս Փրկիչ, ընդ հովանեաւ սուրբ կափարիչ վիմիւ, ի թուականութեան Հայոց ԶԻԽ՝ ամի. աստուածասէր տանուտէրն Յովհանն եւ իւր կենակիցն Մօրէ գնեցին զգանձարանս յիշատակ բարի հոգւոյ իւրեանց եւ ծնողացն իւրոց եւ որդւոյն Սատաղին եւ ի Բրիստոս հանգուցեալ կեցունին, Սարգսին եւ Կարապետին, եւ ամենայն արեան մերձաւորաց, կենդանեաց եւ մեռելոց. ամէն. ի սուրբ եկեղեցիս, ի գեղս որ կոչի բանձառ: Յիշեցէք ի Սուրբ եւ ի մաքրափայլ յաղթս ձեր առաջնորդն Բրիստոսի, զՅովհանն... եւ զկիւնն իւր Մօրէ, եւ զծնաւդսն իւրեանց եւ Աստուած ողորմի ասացէք եւ մեղաց թողութիւն խնդրեցէք, եւ Բրիստոս Աստուած որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշելեացդ եւ մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի. ամէն ր»: